**Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 26**

# *Թոշակային հատուցումների պլանների հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունները*

## Գործողության ոլորտը

1. **Սույն ստանդարտը պետք է կիրառվի թոշակային հատուցումների պլանների ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ, այդպիսի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս:**

2. Թոշակային հատուցումների պլանները երբեմն կոչվում են զանազան այլ անվանումներով, օրինակ՝ «կենսաթոշակային սխեմաներ», «ծերության սխեմաներ» կամ «թոշակային հատուցումների սխեմաներ»: Սույն ստանդարտը թոշակային հատուցումների պլանը դիտարկում է որպես պլանի մասնակիցների գործատուներից առանձին հաշվետու միավոր: Մյուս բոլոր ստանդարտները կիրառվում են թոշակային հատուցումների պլանների ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ այնքանով, որքանով դրանք չեն փոխարինվում սույն ստանդարտով:

3. Սույն ստանդարտն անդրադառնում է պլանի հաշվապահական հաշվառմանը և հաշվետվությունների ներկայացմանը մասնակիցներին՝ որպես խմբի: Այն չի անդրադառնում առանձին մասնակիցներին՝ իրենց թոշակային հատուցումների իրավունքների մասին ներկայացվող հաշվետվություններին:

4. «*Աշխատակիցների հատուցումներ*» ՀՀՄՍ 19-ը դիտարկում է պլաններ ունեցող գործատուների ֆինանսական հաշվետվություններում թոշակային հատուցումների ծախսումների որոշումը: Ուստի, սույն ստանդարտը լրացնում է ՀՀՄՍ 19-ը:

5. Թոշակային հատուցումների պլանները կարող են լինել սահմանված մասհանումների պլաններ կամ սահմանված հատուցումների պլաններ: Շատ դեպքերում պահանջվում է առանձին հիմնադրամների ստեղծում, որոնք կարող են լինել կամ չլինել առանձին իրավաբանական անձ, կարող են ունենալ կամ չունենալ լիազորագրային կառավարիչներ, և որոնց կատարվում են մասհանումներ, և որոնց կողմից վճարվում են թոշակային հատուցումները: Սույն ստանդարտը կիրառվում է՝ անկախ այն բանից, թե արդյոք ստեղծվել է հիմնադրամ, և անկախ այն բանից, թե արդյոք կան լիազորագրային կառավարիչներ:

6. Ապահովագրական ընկերություններում ներդրված ակտիվներ ունեցող թոշակային հատուցումների պլանները ենթակա են հաշվառման և ֆոնդավորման միևնույն պահանջներին, ինչ՝ մասնավոր հատվածում ներդրումների համաձայնությունները: Հետևաբար, դրանք գտնվում են սույն ստանդարտի գործողության ոլորտում, բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրական ընկերության հետ պայմանագիրը կնքվում է թոշակային պլանի կոնկրետ մասնակցի կամ մասնակիցների խմբի անունից, և թոշակային հատուցումների գծով պարտականությունը բացառապես ապահովագրական ընկերության պարտականությունն է:

7. Սույն ստանդարտը չի անդրադառնում աշխատանքային հատուցումների այլ ձևերի, ինչպիսիք են աշխատանքից ազատման փոխհատուցումները, հետաձգված փոխհատուցման համաձայնությունները, երկարամյա ծառայության համար տրվող արձակուրդի հատուցումները, վաղաժամկետ թոշակի անցնելու կամ աշխատանքից հարկադիր ազատման հատուկ պլանները, առողջապահական և սոցիալական պլանները կամ պարգևավճարների պլանները: Պետական սոցիալական ապահովության համաձայնությունները նույնպես ներառված չեն սույն ստանդարտի գործողության ոլորտում:

## Սահմանումներ

**8. Ստորև բերված տերմինները սույն ստանդարտում օգտագործված են հետևյալ իմաստներով.**

***Թոշակային (հեռաշխատանքային հատուցումների) պլանները*** **համաձայնագրեր են, որոնցով կազմակերպությունը իր աշխատակիցներին տրամադրում է հատուցումներ ծառայությունը դադարեցնելու պահին կամ դրանից հետո (տարեկան եկամուտների կամ միանվագ գումարի տեսքով), երբ այդպիսի հատուցումները կամ դրանց ուղղված գործատուների հատկացումները կարող են որոշվել կամ գնահատվել նախքան թոշակի անցնելը՝ փաստաթղթերի դրույթների կամ կազմակերպության անցյալի փորձի հիման վրա:**

***Սահմանված մասհանումների պլանները*** **թոշակային հատուցումների պլաններ են, որոնց համաձայն՝ որպես թոշակային հատուցում վճարվելիք գումարները որոշվում են հիմնադրամին կատարվող մասհանումներով՝ հիմնադրամի միջոցների ներդրումից առաջացող եկամուտների հետ միասին:**

***Սահմանված հատուցումների պլանները*** **թոշակային հատուցումների պլաններ են, որոնց համաձայն՝ որպես թոշակային հատուցում վճարվելիք գումարները որոշվում են բանաձևի միջոցով, որի հիմքում սովորաբար ընկած են աշխատակիցների վաստակը և (կամ) ծառայության տարիները:**

***Ֆոնդավորումն*** **ակտիվների փոխանցումն է գործատուից առանձին կազմակերպության (*հիմնադրամին*)՝ թոշակային հատուցումների վճարման ապագա պարտականությունները կատարելու նպատակով:**

**Սույն ստանդարտի նպատակներով օգտագործվում են նաև հետևյալ տերմինները.**

***Մասնակիցները*** **թոշակային հատուցումների պլանի անդամները և այլ անձինք են, ովքեր իրավունք ունեն հատուցումներ ստանալու այդ պլանի ներքո:**

***Հատուցումների համար հասանելի զուտ ակտիվները*** **պլանի ակտիվներն են՝ հանած պարտավորությունները, բացի խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքից:**

***Խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը*** **ներկա և նախկին աշխատակիցներին թոշակային հատուցումների պլանի շրջանակներում ակնկալվող այն վճարումների ներկա արժեքն է, որոնք վերաբերում են արդեն իսկ մատուցված ծառայությանը:**

***Վաստակված հատուցումները*** **հատուցումներ են, որոնց նկատմամբ իրավունքները, թոշակային հատուցումների պլանի պայմանների համաձայն, կախված չեն աշխատանքի շարունակությունից:**

9. Որոշ թոշակային հատուցումների պլաններ ունեն գործատուներից տարբեր հովանավորներ. սույն ստանդարտը կիրառվում է նաև այդպիսի պլանների ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ:

10. Թոշակային հատուցումների պլանների մեծ մասը հիմնված է ֆորմալ համաձայնագրերի վրա: Որոշ պլաններ ոչ ֆորմալ են, բայց, որպես գործատուների հաստատված փորձի արդյունք, ձեռք են բերել պարտականության աստիճան: Մինչդեռ որոշ պլաններ գործատուներին թույլատրում են սահմանափակելու պլանների ներքո իրենց պարտականությունները, սովորաբար գործատուի համար դժվար է պլանը չեղյալ համարել, եթե պետք է, որ աշխատակիցները չհեռանան աշխատանքից: Ոչ ֆորմալ պլանի նկատմամբ կիրառվում է հաշվառման և հաշվետվությունների ներկայացման միևնույն հիմունքը, ինչ ֆորմալ պլանի նկատմամբ:

11. Թոշակային հատուցումների շատ պլաններ նախատեսում են առանձին հիմնադրամների ստեղծում, որոնց կատարվում են մասհանումներ, և որոնց կողմից վճարվում են հատուցումներ: Նման հիմնադրամները կարող են կառավարվել այնպիսի անձանց կողմից, ովքեր հիմնադրամի ակտիվները

կառավարելիս գործում են անկախ: Որոշ երկրներում այդ անձինք կոչվում են լիազորագրային կառավարիչներ: Լիազորագրային կառավարիչ տերմինը սույն ստանդարտում կիրառվում է այդպիսի անձանց բնութագրելու համար՝ անկախ այն բանից, թե լիազորագրային կառավարում (տրաստ) ձևավորվել է, թե ոչ:

12. Սովորաբար թոշակային հատուցումների պլանները բնութագրվում են կա՛մ որպես սահմանված մասհանումների պլաններ, կա՛մ որպես սահմանված հատուցումների պլաններ, որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ տարբերակիչ առանձնահատկությունները: Երբեմն գոյություն ունեն պլաններ, որոնք պարունակում են երկուսի բնութագրիչները: Սույն ստանդարտի նպատակներով այդպիսի հիբրիդային պլանները համարվում են սահմանված հատուցումների պլաններ:

## Սահմանված մասհանումների պլաններ

**13. Սահմանված մասհանումների պլանի ֆինանսական հաշվետվությունները պետք է ներառեն հատուցումների համար հասանելի զուտ ակտիվների մասին հաշվետվություն և ֆոնդավորման քաղաքականության նկարագրություն:**

14. Սահմանված մասհանումների պլանի ներքո մասնակցի ապագա հատուցումների գումարը որոշվում է գործատուի, մասնակցի կամ նրանց երկուսի կողմից վճարված մասհանումներով և հիմնադրամի գործունեության արդյունավետությամբ ու ներդրումային եկամուտներով: Գործատուի պարտականությունները սովորաբար մարվում են՝ հիմնադրամին մասհանումներ կատարելով: Որպես կանոն՝ ակտուարային մասնագետի խորհրդատվություն չի պահանջվում՝ չնայած այդպիսի խորհուրդ երբեմն օգտագործվում է՝ գնահատելու համար ապագա հատուցումները, որոնք կարող են հասանելի լինել՝ ելնելով ներկա մասհանումներից և ապագա մասհանումների ու ներդրումային եկամուտների տարբեր մակարդակներից:

15. Մասնակիցներին հետաքրքրում է պլանի գործունեությունը, որովհետև այն ուղղակիորեն ազդում է նրանց ապագա հատուցումների մակարդակի վրա: Մասնակիցները շահագրգռված են իմանալու՝ արդյոք մասհանումները ստացվել են, և իրականացվում է արդյոք պատշաճ վերահսկողություն՝ շահառուների (բենեֆիցիարների) իրավունքները պաշտպանելու համար: Գործատուն շահագրգռված է պլանի արդյունավետ և պատշաճ գործելով:

16. Սահմանված մասհանումների պլանի հաշվետվությունների նպատակն է պարբերաբար տեղեկատվություն տրամադրել պլանի և դրա ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ: Այդ նպատակին սովորաբար կարելի է հասնել՝ հետևյալը ներառող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելով՝

ա) ժամանակաշրջանի ընթացքում նշանակալի գործունեության նկարագրությունը, ինչպես նաև պլանին, դրա անդամակցությանը և պայմաններին վերաբերող որևէ փոփոխության ազդեցությունը,

բ) հաշվետվություն, որն արտացոլում է տվյալ ժամանակաշրջանի ընթացքում կատարված գործարքներն ու ներդրումային գործունեության արդյունքները, ինչպես նաև պլանի ֆինանսական վիճակը ժամանակաշրջանի վերջի դրությամբ, և

գ) ներդրումային քաղաքականության նկարագրությունը:

## Սահմանված հատուցումների պլաններ

**17. Սահմանված հատուցումների պլանի ֆինանսական հաշվետվությունները պետք է պարունակեն կա՛մ՝**

**ա) հաշվետվություն, որն արտացոլում է՝**

**(i) հատուցումների համար հասանելի զուտ ակտիվները,**

**(ii) խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը՝ տարանջատելով վաստակված հատուցումները և չվաստակված հատուցումները, և**

**(iii) արդյունքում առաջացած ավելցուկը կամ պակասորդը, կա՛մ**

**բ) հատուցումների համար հասանելի զուտ ակտիվների մասին հաշվետվություն, որը ներառում է՝**

**(i) խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը բացահայտող ծանոթագրություն՝ տարանջատելով վաստակված հատուցումները և չվաստակված հատուցումները, կամ**

**(ii) հղում կից ներկայացված ակտուարային հաշվետվությունում տեղ գտած այդ տեղեկատվությանը:**

**Եթե ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտուարային գնահատում պատրաստված չէ, ապա, որպես հիմք, պետք է օգտագործվի ամենավերջին գնահատումը, և բացահայտվի գնահատման ամսաթիվը:**

**18. 17-րդ պարագրաֆի նպատակներով խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը պետք է հիմնված լինի տվյալ ամսաթվի դրությամբ մատուցված ծառայության գծով պլանի պայմաններով խոստացված հատուցումների վրա՝ օգտագործելով կա՛մ ընթացիկ, կա՛մ կանխատեսվող աշխատավարձերի մակարդակները՝ բացահայտելով կիրառված հիմունքը: Պետք է բացահայտվի նաև ակտուարային ենթադրություններում ցանկացած այնպիսի փոփոխությունների ազդեցությունը, որոնք խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքի վրա ունեցել են նշանակալի ազդեցություն:**

**19. Ֆինանսական հաշվետվություններում պետք է բացատրվի խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքի և հատուցումների համար հասանելի զուտ ակտիվների միջև փոխկապակցվածությունը, ինչպես նաև խոստացված հատուցումների ֆոնդավորման քաղաքականությունը:**

20. Սահմանված հատուցումների պլանի դեպքում խոստացված թոշակային հատուցումների վճարումը կախված է պլանի ֆինանսական վիճակից և մասհանումներ կատարողների՝ պլանին ապագա մասհանումներ կատարելու կարողությունից, ինչպես նաև պլանի ներդրումային գործունեության արդյունքներից և գործառնությունների արդյունավետությունից:

21. Սահմանված հատուցումների պլանն ակտուարային մասնագետի պարբերական խորհրդատվության կարիքն ունի՝ պլանի ֆինանսական դրությունը գնահատելու, ենթադրությունները վերանայելու և ապագա մասհանումների մակարդակն առաջարկելու համար:

22. Սահմանված հատուցումների պլանի հաշվետվությունների ներկայացման նպատակը պլանի ֆինանսական միջոցների և գործունեության վերաբերյալ պարբերաբար տեղեկատվության տրամադրումն է, ինչն օգտակար է ժամանակի ընթացքում միջոցների կուտակման և պլանի հատուցումների միջև փոխկապվածության գնահատման համար: Այս նպատակին սովորաբար կարելի է հասնել՝ հետևյալը ներառող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելով՝

ա) ժամանակաշրջանի ընթացքում նշանակալի գործունեության նկարագրությունը, ինչպես նաև պլանին, դրա անդամակցությանը և պայմաններին վերաբերող որևէ փոփոխության ազդեցությունը,

բ) հաշվետվություն, որն արտացոլում է տվյալ ժամանակաշրջանի ընթացքում կատարված գործարքներն ու ներդրումային գործունեության արդյունքները, ինչպես նաև պլանի ֆինանսական վիճակը ժամանակաշրջանի վերջի դրությամբ,

գ) ակտուարային տեղեկատվությունը՝ կա՛մ որպես հաշվետվությունների մաս, կա՛մ առանձին հաշվետվությամբ, և

դ) ներդրումային քաղաքականության նկարագրությունը:

## Խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը

23. Թոշակային հատուցումների պլանի կողմից ակնկալվող վճարումների ներկա արժեքը կարող է հաշվարկվել և հաշվետվություններում ներկայացվել՝ օգտագործելով աշխատավարձի ընթացիկ մակարդակները կամ մինչև մասնակիցների թոշակի անցնելու պահն աշխատավարձի կանխատեսվող մակարդակները:

24. Ընթացիկ աշխատավարձի մակարդակի մոտեցումը որդեգրելու օգտին բերվող պատճառները ներառում են՝

ա) խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը, լինելով պլանի յուրաքանչյուր մասնակցին ներկայումս վերագրելի գումարների հանրագումարը, կարող է հաշվարկվել ավելի օբյեկտիվորեն, քան աշխատավարձի կանխատեսվող մակարդակների հիման վրա, որովհետև այն ավելի քիչ ենթադրություններ է պարունակում,

բ) աշխատավարձի ավելացմամբ պայմանավորված հատուցումների աճը դառնում է պլանի պարտականություն աշխատավարձն ավելանալու պահից, և

գ) ընթացիկ աշխատավարձի մակարդակի վրա հիմնված խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքի գումարը սովորաբար ավելի մոտ է աշխատանքից ազատման կամ պլանի դադարեցման դեպքում վճարվելիք գումարին:

25. Կանխատեսվող աշխատավարձի մակարդակի մոտեցումը որդեգրելու օգտին բերվող պատճառները ներառում են՝

ա) ֆինանսական տեղեկատվությունը պետք է պատրաստվի անընդհատության հիմունքով՝ անկախ այն ենթադրություններից և գնահատումներից, որ պետք է կատարվեն,

բ) վերջնական վճարումների պլանի շրջանակներում հատուցումները որոշվում են թոշակի անցնելու կամ դրան մոտ ամսաթվի դրությամբ եղած աշխատավարձերի մակարդակով. ուստի աշխատավարձերը, մասհանումների մակարդակները և հատույցադրույքները պետք է կանխատեսվեն, և

գ) աշխատավարձի կանխատեսումները չներառելը, երբ ֆոնդավորումը մեծ մասամբ հիմնվում է աշխատավարձի կանխատեսումների վրա, կարող է հաշվետվություններում հանգեցնել թվացող գերֆոնդավորման, երբ պլանը գերֆոնդավորված չէ, կամ պատշաճ ֆոնդավորման, երբ պլանը թերֆոնդավորված է:

26. Ընթացիկ աշխատավարձերի վրա հիմնված խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը բացահայտվում է պլանի ֆինանսական հաշվետվություններում՝ ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ վաստակած հատուցումների գծով պարտականությունը ցույց տալու համար: Կանխատեսվող աշխատավարձերի հիման վրա խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը բացահայտվում է՝ պոտենցիալ պարտականությունների մեծությունն անընդհատության հիմունքով ցույց տալու համար, ինչը, սովորաբար, հիմք է հանդիսանում ֆոնդավորման համար: Ի լրումն խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա

արժեքի բացահայտմանը՝ կարող է բավականաչափ բացատրությունների կարիք լինել, որպեսզի հստակ կերպով մատնանշվի այն համատեքստը, որում պետք է ընկալվի խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը: Նման բացատրություն կարող է լինել պլանավորված ապագա ֆոնդավորման համապատասխանության և աշխատավարձի կանխատեսումների վրա հիմնված ֆոնդավորման քաղաքականության մասին տեղեկատվության ձևով: Սա կարող է ներառվել ֆինանսական հաշվետվություններում կամ ակտուարային մասնագետի զեկույցում:

## Ակտուարային գնահատումների հաճախականությունը

27. Շատ երկրներում ակտուարային գնահատումներ իրականացվում են ոչ հաճախ, քան երեք տարին մեկ անգամ: Եթե ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտուարային գնահատում չի պատրաստվել, ապա որպես հիմք օգտագործվում է ամենավերջին գնահատումը և բացահայտվում է գնահատման ամսաթիվը:

## Ֆինանսական հաշվետվությունների բովանդակությունը

28. Սահմանված հատուցումների պլանների համար տեղեկատվությունը ներկայացվում է հետևյալ ձևերից որևէ մեկով, որոնք արտացոլում են ակտուարային տեղեկատվության բացահայտման և ներկայացման տարբեր գործնական փորձեր՝

ա) ֆինանսական հաշվետվություններում ներառվում է հաշվետվություն, որը ցույց է տալիս հատուցումների համար հասանելի զուտ ակտիվները, խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը և արդյունքում ստացվող ավելցուկը կամ պակասորդը: Պլանի ֆինանսական հաշվետվությունները պարունակում են նաև հաշվետվություններ հատուցումների համար հասանելի զուտ ակտիվների փոփոխությունների մասին և խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքի փոփոխությունների մասին: Ֆինանսական հաշվետվություններին կից կարող է ներկայացվել ակտուարային մասնագետի՝ խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը հիմնավորող առանձին հաշվետվություն,

բ) ֆինանսական հաշվետվություններ, որոնք ներառում են հատուցումների համար հասանելի զուտ ակտիվների մասին հաշվետվություն և հատուցումների համար հասանելի զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն: Խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը բացահայտվում է հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Ֆինանսական հաշվետվություններին կից կարող է ներկայացվել ակտուարային մասնագետի՝ խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը հիմնավորող առանձին հաշվետվություն, և

գ) ֆինանսական հաշվետվություններ, որոնք ներառում են հատուցումների համար հասանելի զուտ ակտիվների մասին հաշվետվություն և հատուցումների համար հասանելի զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն՝ խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը բացահայտող առանձին ակտուարային հաշվետվության հետ միասին:

Նշված ձևերից յուրաքանչյուրի դեպքում ֆինանսական հաշվետվություններին կից կարող է ներկայացվել նաև լիազորագրային կառավարիչների զեկույց՝ կազմված ղեկավարության կամ տնօրենների զեկույցի բնույթով, ինչպես նաև ներդրումների վերաբերյալ հաշվետվություն:

29. 28(ա) և (բ) պարագրաֆներում նկարագրված ձևերի կողմնակիցները կարծում են, որ խոստացված թոշակային հատուցումների և այդ մոտեցումների համաձայն ներկայացված այլ տեղեկատվության քանակական ներկայացումն օգնում է օգտագործողներին՝ գնահատելու պլանի ընթացիկ

կարգավիճակը և պլանի պարտականությունների կատարման հավանականությունը: Նրանք նաև կարծում են, որ ֆինանսական հաշվետվությունները պետք է ինքնին ամբողջական լինեն, այլ ոչ թե հիմնվեն կից ներկայացվող հաշվետվությունների վրա: Այնուամենայնիվ, կարծիք կա, որ 28(ա) պարագրաֆում նկարագրված ձևը կարող է այնպիսի տպավորություն ստեղծել, թե գոյություն ունի պարտավորություն, մինչդեռ խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը, ըստ այդ կարծիքի, չունի պարտավորությանը բնորոշ բոլոր գծերը:

30. 28(գ) պարագրաֆում նկարագրված ձևի կողմնակիցները կարծում են, որ խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը չպետք է ներառվի հատուցումների համար հասանելի զուտ ակտիվների մասին հաշվետվությունում, ինչպես 28(ա) պարագրաֆում նկարագրված ձևի դեպքում, կամ նույնիսկ բացահայտվի ծանոթագրությամբ, ինչպես նկարագրված է 28(բ) պարագրաֆում, քանի որ այն ուղղակիորեն կհամեմատվի պլանի ակտիվների հետ, իսկ այդպիսի համեմատությունը կարող է ընդունելի չլինել: Նրանք պնդում են, որ անպայման չէ, որ ակտուարային մասնագետները խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը համեմատեն ներդրումների շուկայական արժեքի հետ, բայց, փոխարենը, կարող են գնահատել ներդրումներից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքը: Հետևաբար, այս ձևի կողմնակիցները կարծում են, որ այդպիսի համեմատությունը դժվար թե արտացոլի ակտուարային մասնագետի կողմից պլանի ընդհանուր գնահատականը, և որ այն կարող է ճիշտ չընկալվել: Նաև կարծիք կա, որ, անկախ քանակական ներկայացումից, խոստացված թոշակային հատուցումների մասին տեղեկատվությունը պետք է ներառվի բացառապես առանձին ակտուարային հաշվետվությունում, որտեղ կարող են պատշաճ բացատրություններ տրվել:

31. Սույն ստանդարտն ընդունում է խոստացված թոշակային հատուցումների վերաբերյալ տեղեկատվության՝ առանձին ակտուարային հաշվետվությունում բացահայտումը թույլատրելու օգտին տեսակետները: Այն հերքում է խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքի քանակական ներկայացմանը դեմ բերվող փաստարկները: Հետևաբար, սույն ստանդարտի ներքո ընդունելի են համարվում 28(ա) և (բ) պարագրաֆներում նկարագրված ձևերը, ինչպես նաև 28(գ) պարագրաֆում նկարագրված ձևը՝ պայմանով, որ ֆինանսական հաշվետվությունները հղում պարունակեն կից ներկայացվող ակտուարային հաշվետվությանը, որը կներառի խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը:

## Բոլոր պլանները

### Պլանի ակտիվների գնահատումը

**32. Թոշակային հատուցումների պլանի ներդրումները պետք է հաշվառվեն իրական արժեքով: Շուկայում ազատ շրջանառվող արժեթղթերի դեպքում իրական արժեքը դրանց շուկայական արժեքն է: Եթե կան պլանի ներդրումներ, որոնց իրական արժեքը հնարավոր չէ գնահատել, պետք է բացահայտվի իրական արժեքը չօգտագործելու պատճառը:**

33. Շուկայում ազատ շրջանառվող արժեթղթերի դեպքում ներդրումների իրական արժեքը, սովորաբար, դրանց շուկայական արժեքն է, քանի որ այն համարվում է հաշվետու ամսաթվի դրությամբ արժեթղթերի և ժամանակաշրջանի ներդրումային գործունեության արդյունքների առավել արդյունավետ գնահատականը: Այն արժեթղթերը, որոնք ունեն ֆիքսված մարման արժեք և ձեռք են բերվել պլանի պարտականությունների կամ դրանց որոշակի մասերի հետ համապատասխանեցնելու համար, կարող են հաշվառվել դրանց վերջնական մարման արժեքի վրա հիմնված գումարներով՝ նկատի ունենալով մինչև մարումը հաստատուն հատույցադրույքը: Եթե կան պլանի ներդրումներ, որոնց իրական արժեքը հնարավոր չէ գնահատել, ինչպես, օրինակ, որևէ կազմակերպության նկատմամբ լիակատար սեփականությունը, ապա բացահայտվում է իրական արժեքը չօգտագործելու պատճառը: Այնքանով,

որքանով ներդրումները հաշվառվում են շուկայական արժեքից կամ իրական արժեքից տարբեր գումարներով, դրանց իրական արժեքը սովորաբար նույնպես բացահայտվում է: Այն ակտիվները, որոնք օգտագործվում են հիմնադրամի գործառնությունների համար, հաշվառվում են՝ համաձայն համապատասխան ստանդարտների:

## Բացահայտում

**34. Թոշակային հատուցումների պլանի ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ դրա՝ սահմանված հատուցումների կամ սահմանված մասհանումների պլան լինելուց, պետք է պարունակեն նաև հետևյալ տեղեկատվությունը՝**

**ա) հատուցումների համար հասանելի զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն,**

**բ) հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթների ամփոփագիր, և**

**գ) պլանի նկարագրությունը և ժամանակաշրջանի ընթացքում պլանում որևէ փոփոխության ազդեցությունը:**

35. Թոշակային հատուցումների պլանների կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ներառում են հետևյալը, եթե դա կիրառելի է՝

ա) հատուցումների համար հասանելի զուտ ակտիվների մասին հաշվետվություն, բացահայտելով՝

(i) ակտիվները ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ համապատասխան դասակարգմամբ,

(ii) ակտիվների գնահատման հիմունքը,

(iii) կա՛մ հատուցումների համար հասանելի զուտ ակտիվների 5%-ը, կա՛մ արժեթղթերի ցանկացած դասի կամ տեսակի 5%-ը գերազանցող յուրաքանչյուր առանձին ներդրման վերաբերյալ մանրամասնություններ,

(iv) գործատու կազմակերպությունում կատարած ցանկացած ներդրման վերաբերյալ մանրամասնություններ, և

(v) խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքից տարբեր պարտավորություններ,

բ) հատուցումների համար հասանելի զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն՝ արտացոլելով հետևյալը՝

(i) գործատուի կատարած մասհանումները,

(ii) աշխատակիցների կատարած մասհանումները,

(iii) ներդրումային գործունեությունից եկամուտները, օրինակ՝ տոկոսները և շահաբաժինները,

(iv) այլ եկամուտներ,

(v) վճարված կամ վճարվելիք հատուցումները (վերլուծված, օրինակ՝ ըստ թոշակային, մահվան կամ անաշխատունակության հատուցումների և միանվագ վճարումների),

(vi) վարչական ծախսերը,

(vii) այլ ծախսեր,

(viii) շահութահարկը,

(ix) ներդրումների օտարումից և ներդրումների արժեքի փոփոխություններից շահույթները կամ վնասները, և

(x) այլ պլաններից ստացված և այլ պլաններին փոխանցված միջոցները,

գ) ֆոնդավորման քաղաքականության նկարագրությունը,

դ) սահմանված հատուցումների պլանների դեպքում խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքը (որը կարող է տարբերակվել վաստակված և չվաստակված հատուցումների)՝ հիմնված տվյալ ամսաթվի դրությամբ մատուցված ծառայության գծով պլանի պայմանների խոստացված հատուցումների վրա և օգտագործելով աշխատավարձի ընթացիկ մակարդակները կամ աշխատավարձի կանխատեսվող մակարդակները. այս տեղեկատվությունը կարող է ներառվել կից ներկայացվող ակտուարային հաշվետվությունում, որը պետք է ընկալվի՝ համակցվելով համապատասխան ֆինանսական հաշվետվություններին, և

ե) սահմանված հատուցումների պլանների դեպքում՝ էական ակտուարային ենթադրությունների նկարագրությունը և խոստացված թոշակային հատուցումների ակտուարային ներկա արժեքի հաշվարկման համար օգտագործված մեթոդը:

36. Թոշակային հատուցումների պլանի հաշվետվությունը պարունակում է պլանի նկարագրությունը՝ կա՛մ որպես ֆինանսական հաշվետվությունների մաս, կա՛մ որպես առանձին զեկույց: Այն կարող է պարունակել հետևյալը՝

ա) գործատուների անունները և ընդգրկված աշխատակիցների խմբերը,

բ) հատուցում ստացող մասնակիցների թիվը և այլ մասնակիցների թիվը՝ պատշաճ դասակարգմամբ,

գ) պլանի տեսակը՝ սահմանված մասհանումների պլան կամ սահմանված հատուցումների պլան,

դ) ծանոթագրություն այն մասին, թե արդյոք մասնակիցները պլանին կատարում են մասհանումներ,

ե) մասնակիցներին խոստացված թոշակային հատուցումների նկարագրությունը.

զ) պլանի որևէ դադարեցման պայմանների նկարագրությունը, և

է) հաշվետվություններում ընդգրկված ժամանակաշրջանի ընթացքում (ա)-(զ) կետերում տեղի ունեցած փոփոխությունները:

Ընդունված է հղում կատարել այլ փաստաթղթերի, որոնք հեշտությամբ մատչելի են օգտագործողներին, և որոնցում նկարագրված է պլանը՝ ներառելով միայն հետագա փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն:

## Ուժի մեջ մտնելը

37. Սույն ստանդարտը գործողության մեջ է դրվում թոշակային հատուցումների պլանների՝ 1988 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջաններ ընդգրկող ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: